



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 26 >> *Հասկերյան* 2017թ.

N 48

ք. Արմավիր

ՎԱՋԱԳԱՆ ՄԿՐՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի առաջին մասով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Վաչագան Մկրտչյանի 2017 թվականի հունիսի 21-ի դիմումը.

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ '

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Վաչագան Մկրտչյանին տրամադրել 2016-2017 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը 2017 թվականի հուլիսի 3-ից օգոստոսի 4-ը ներառյալ՝ 24 աշխատանքային (20 նվազագույն, 4 լրացուցիչ) և 1 տոնական օր տևողությամբ:
2. Վաչագան Մկրտչյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի բուժական գծով տեղակալ Մելիքսեթ Կոնյանին:
3. Վաչագան Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի օգոստոսի 7-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



*Handwritten signature*

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ